ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՀՈՒՇԱՐՁԱՆ

Ադրբեջանական ՍՍՀ Շահումյանի շրջանում պահպանված հայերեն վիմական արձանագրությունները որոշակի արժեք են ներկայացնում հայ ժողովրդի պատմության առանձին հարցերի ուսումնասիրության տեսանկյունից։ Դեռևս անցյալ դարի վերջերին Մակար Բարխուտարյանցը լինելով Արցախի այս կողմերում, կարևոր տեղեկություններ է հավաքել բոլոր գյուղերի, անգամ հին գյուղատեղերի վերաբերյալ, արտագրել բազմաթիվ վիմական ու մատենական գրություններ։ Դրանք հրապարակվել են գլխավորապես նրա «Արցախ» աշխատության մեջ։ Մակայն որոշ հուշարձաններ, գտնվելով հիմնական ճանապարհից հեռու, ամփոփված դարավոր ու խիտ անտառների մեջ, դուրս են մնացել երախտաշատ գիտնականի տեսադաշտից։

Խրխափոր գյուղից դեպի Գյուլիստան տանող ճանապարհի աջ կողմում (մոտ 300 մ հեռավորության վրա), «Մանդուռն աղբյուր» կոչվող վայրում, անտառի մեջ մի կիսավեր եկեղեցի կա։ «Մանդուռ»-ը, որ տեղի բարբառով «մատուռ» է նշանակում, անշուշտ շփոթություն է այս եկեղեցու հետ, որից էլ աղբյուրի անունն է առաջացել։ Եկեղեցու տանիքը իջել է, կառույցը հողի հաստ շերտով է ծածկվել, և դուրս ցցված երևում է միայն պատերի վերին շրջագիծը՝ 1—2 մ բարձրությամբ։ Մուտքի կամարակապ ճակատաքարի վրա, որ ներկայումս գետնից հաղիվ կես մետր է բարձր, անխաթար պահպանվել է եկեղեցու շինարարական արձանագրությունը[2] (նկ. 1)։

ԹԻԻՆ : ՁԱ, ԷՐ
ԿԱՄԱԻՆ ԱՑ ԵՍ ԵԼՈՏ
ԵԻ ԵՂԲԵՐ ԻՄ ԱԻՏԱՐ ԵԻ / ՈՐԴԻ
ԻՄ / ԵՆՈՔ ՇԱՆԵՑԱՔ ՁԵԿԵՂԵՑԻՍ
ՑԻՇԱՏԱԿ ՄԵՋ ԵԻ ՆՋԵՑԵԼՈՑ ՄԵՐՈՑ Ի
ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻ ՏՐ ՆԱՐՍԻՍԻ ԱՄԻՐ
ՈՒԹԻ ԻԻԱՆԻ ԵԻ ՎԱՐՀԱՄՇԱՀԻ

1252 թ. Աղվանից կաթողիկոսը իրոք Ներսեսն էր[3], իսկ թե ովքեր են արձանագրության մեջ հիշատակված Իվանն ու Վարհամշահը, մեզ չհաջողվեց պարզել։ Հուշարձանը գտնվում է այնպիսի վայրում, որ կարող է ծայրաշրջան համարվել թե՛ Վահրամյանների, թե՛ Խաչենի իշխանության համար։ Արդյո՞ք նրանց միջև եղել է մեկ այլ վարչական միավոր՝ ամիրայություն, թե՞ այստեղ պարզապես հիշատակված են այդ իշխանական տներից մեկի ներկայացուցիչները կամ տեղի մանր իշխանավորները։ Հայտնի է, որ Վահրամյան իշխան Աղրուղան ուներ Վահրամ, Զաքարե, Իվանե որդիներ[4], սակայն բավարար հիմքեր չունենք այս ավագ ու կրտսեր եղբայրներին նույնացնելու արձանագրության Իվանի ու Վարհամշահի հետ։

---

1 Մակար եպիս. Բարխուտարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 240—257։

2 Տասնամյակներ առաջ այս արձանագրությունը կարդացել և շրջանում շատերի ուշադրությունն է նրա վրա հրավիրել Ղարաչինար գյուղի բնակիչ Հայկ Ավետյանը։ Այս մասին մեզ տեղյակ պահեցին և որոշ վիմագրեր երևան հանելու հարցում օգնեցին Շահումյան ավանի բնակիչներ Քոքոր Տրունյանը և Կարեն Ջիրքինյանը, որի համար մեր շնորհակալությունն ենք հայտնում։

3 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 392։

4 Նույն տեղում, էջ 163։

Եկեղեցու մուտքի մոտ կիսով չափ հողի մեջ խրված գեղեցիկ խաչքար կա՝ գրության հետքերով։ Մենք այն դուրս հանեցինք հողից, սակայն գրությունը վերծանել չհաջողվեց։ Հյուսիսահայաց պատի մոտ, 4—5 մ հեռավորության վրա, մեկ այլ խաչքար է գտնվում՝ ընթեռնելի գրությամբ։

[ԹՎԻՆ] ՌԻԱ ԵՍ ՄԽԻ
[Թ] ԱՐ ԿԱՆԳԵՑԻ ՋՍԲ
ՆՇԱՆՍ Ի ԲԱՐԵԱՅԵԱԻՍՈՒԹԻ
ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ

Եկեղեցու ներսում հողից հանեցինք շքեղ ու նրբանախշ մի խաչքար, որի վրա, սակայն գրություն չկա։

Արևմտյան պատի տակ գտնվում է մի խոշոր գերեզմանաքար, երկու երեսներին վեցական խորաններով, նրբահյուս նախշերով ու քանդակներով։ Այն արևմտյան կողի վրա ունի այսպիսի գրություն՝

..... ՏՐ ՈՀՆՍ ԿՆ՞ԵՑԻ / ՋԵՋՍ ԿԵՆԱԿՑԻՆ / ԻՄ ՀՈՌԻՄԻՆ /
ՀՕՐՆ ԱՂ.. Ն / ՄՕՐՆ ՓԵՐԻՆ ԵՂԲՕՐՆ ՎԱՐԴԱՆԻՆ ՕՆ.....

Խորանների վերևում, քարի երկարությամբ հետևյալ գրությունն է. ԹՎ / Ռ. / ԿԲ / ՀՈԳՈՑՆ, (շարունակվում է հակառակ երեսին, նույն տողով) ԳԴՀ ՎՐԻՆ / .ՍԱԿ / ԵՆԴ . ԵՄ։

Այս հուշարձանի պեղումները կարող են ի հայտ բերել նոր փաստեր ու թերևս այդ դեպքում հնարավոր լինի ճշտել հյուսիս-արևելյան Հայաստանի հիշյալ երկու ազդեցիկ իշխանությունների սահմանը այս հատվածում՝ Մռավ սարից հյուսիս և Ալհարակից (այժմ՝ Քյափաղ լեռ) հյուսիս-արևելք։

ԿԻՄ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ